

Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ ձևավորվող պետությունների միջազգային ճանաչման երկսայրաբանությունները Հարավսլավիայի փլուզումից հետո

ՎԻՈՒԵՏՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական լեզվա հասարակագիտական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվում է ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ ձևավորվող պետությունների միջազգային ճանաչման գործընթացը, մասնավորապես, քաղաքական պետական պրակտիկայի և նորմատիվային միջազգային իրավունքի բախման խնդիրները: Այդ գործընթացն առաջարկվում է դիտարկել որպես երեք փոփոխակալված փուլերի՝ անկախ պետության հռչակում, միջազգային ճանաչում և կայացում, միջանկյալ հատված: Առաջարկվում է Մոնտեվիդեոյի կոնվենցիայով սահմանված պետության չափանիշների այնպիսի մեկնաբանություն, որը հաշվի է առնում գործընթացի իրավական և քաղաքական բաղադրիչների առկայությունն, ինչպես նաև բացատրում է պետության հռչակումից մինչև միջազգային ճանաչում ընկած ժամանակահատվածի տևականության պատճառները: Դիտարկվում են ինքնորոշման իրավունքի հիման վրա հռչակված պետությունների ճանաչման գործընթացներ՝ վերլուծելով մի շարք վիճելի դեպքեր՝ սկսած Հարավսլավիայի փլուզումից հետո Բաղինտերի հանձնաժողովի ներկայացրած կարծիքից:

Բանալի բառեր

Ազգերի ինքնորոշման իրավունք, միջազգային ճանաչում, իրավական և քաղաքական բաղադրիչներ, չճանաչված պետություններ:

Նախաբան

Էթն-քաղաքական հավակնությունների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1990-ական թվականների առաջին կեսին¹, սակայն ուսումնասիրությունները հաստատում են դրանց «երկարակեցությունը». 2009թ. վերջին աշխարհի 18 երկրներում դեռևս շարունակվում էին ինքնորոշման համար ծավալվող էթն-քաղաքական հակամար-

¹ **Gurr T., Marshall M.**, Peace and Conflict 2005: A global Survey of Armed Conflicts, Self-Determination Movements, and Democracy, College Park: Department of Government and Politics: Univ. of Maryland, 2005, p. 99, http://www.cidcm.umd.edu/publications/papers/peace_and_conflict_2005.pdf, (17.08.2016).

տությունները², իսկ «Ֆրիդրմ հաուս»-ի ամենամյա «Ազատության վարկանիշն աշխարհում» 2016թ. զեկույցում³ առանձնացված են 2 «հարակից» (related) և 13 «վիճելի» (disputed) տարածքներ⁴: Նման կարգավիճակ ունեցող երկրների նկատմամբ մոտեցումը պայմանավորված է հիմնարար պատճառներով. ԽՍՀՄ փլուզումից հետո նոր աշխարհաքաղաքական համակարգի ձևավորման միտումներն օբյեկտիվորեն նպաստում են նոր պետությունների առաջացմանը: Ինչպես նշում է Լ. Քոքսը⁵, նեոլիբերալ գլոբալիզացիան մեծացնում է ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա նոր պետությունների ձևավորման հնարավորությունները չորս հիմնական պատճառներով՝

- պետությունների լիազորությունների հարաբերական նվազումը, ինչն առաջին հերթին վերաբերում է համեմատաբար «թույլ» (weak) և դյուրաբեկ (fragile) քաղաքական միավորներին: Նոր պայմաններում նրանց համար զգալիորեն ավելի դժվար է պահպանել իշխանության լեգիտիմությունը, կառավարման և վարչարարության արդյունավետությունը, տնտեսության զործունակությունը, վերահսկել մշակութային բազմազանությունը և ձևավորել ազգային ինքնություն, պահպանել լեգիտիմ բռնության մենաշնորհը, ինչպես նաև դիմակայել արտաքին սպառնալիքներին և պատժամիջոցներին,
- երկրներ աշխարհակարգի դարաշրջանից հետո միջազգային կարգերի փոփոխությունը, ինչը մի շարք երկրների թույլ տվեց աջակցել այս կամ այն սեցեսիոնիստական շարժումներին,
- ազգայնական տրամադրությունների վերելքը պայմանավորող տեղական ազգային և տարածաշրջանային մակարդակներում

² **Marshall M., Cole B.**, Global report 2009: Conflict, Governance, and State Fragility, Center for Systemic Peace and Center for Global Policy, George Mason University, 2009, p. 40,

<http://www.systemicpeace.org/Global%20Report%202009.pdf>, (17.08.2016).

³ Freedom in the World, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (17.08.2016).

⁴ Freedom in the World 2016,

https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf, p. 24, (17.08.2016).

⁵ **Cox L.**, Neo-Liberal Globalisation, Nationalism, and Changed «Conditions for Possibility» for Ceseccionist Mobilization, On the Way to Statehood: Secession and Globalization, A. Pavković, P. Radan (eds.), Ashgate, Aldershot, 2008.

գլոբալացման գործընթացների տարբերակված ընկալումն, ընդ որում, առաջին հերթին այնտեղ, որտեղ իրականացվում է բացառապես էթնիկ քաղաքականություն,

- գլոբալացման դարաշրջանի տեխնոլոգիական և մշակութային ապրանքների (արբանյակային և օպտիկամանրաթելային կապի, ինտերնետի և այլն) օգտագործման հնարավորությունը՝ որպես ազգայնական վերածննդի միջոց:⁶

Այդ խորքային փոփոխությունների արդյունքում տեղի է ունենում իշխանության ապատարածքայնացում: Պետության սահմաններն այլևս չեն համընկնում իշխանության տարածման սահմանների հետ, և իշխանությունը դադարում է լինել տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում որոշումներ կայացնող միակ սուբյեկտը: Անցած դարի երկրորդ կեսից միջազգային իրավունքի բուռն զարգացումը, մասնավորապես, ինքնորոշման իրավունքի լիարժեք կողմնակցի և բազմակի կիրառումը վերոհիշյալ բարենպաստ փոփոխությունների պայմաններում խթան դարձան նոր պետությունների հռչակման համար:

Պետությունների ստեղծման և զարգացման փորձը ցույց է տալիս, որ պետության հռչակումը և անգամ միջազգային ճանաչումն ինքնաբերաբար չեն հանգեցնում հիմնական նպատակի՝ անվտանգության, բարեկեցության և բնականոն զարգացման ապահովմանը: Ավելին, խիստ բազմազան են պետություններում առկա իրավիճակներն ու զարգացման հետագծերը, ինչն էլ ավելի է դժվարացնում այնպիսի բարդ համակարգերի կատարելագործումն, ինչպիսին պետությունն է, և վերջին տասնամյակների ընթացքում միանգամայն բնական է դրանց գործունեության արդյունավետության կամ կայացածության ուսումնասիրությանն ուղղված գիտական հետազոտությունների թվի կտրուկ աճը: Այդ աշխատությունների նպատակը ոչ միայն իրավիճակի գնահատումն է, այլև՝ օրինաչափությունների, առկա թերությունների պատճառների ու դրանց հաղթահարման հնարավորությունների բացահայտումը: Խնդիրն առավել բարդ է նորաստեղծ, սակայն դեռևս չճանաչված պետությունների համար, քանի որ առկա են կայացման լրացուցիչ բարդություններ (մասնավորապես, պայմանավորված

⁶ Cox L., Op. cit., p. 17.

միջազգային կապերի խիստ սահմանափակությամբ): Հատկապես բարդ են պետության կայացածության և ճանաչվածության, ինչպես նաև դրանց փոխադարձ առնչություններին վերաբերող ուսումնասիրությունները: Ակնհայտ է, որ պետության ճանաչումը՝ իրավասուբյեկտության ընդունումը, մի նոր կարևոր հնարավորություն է տալիս զարգացման և կայացման համար, բայց հետաքրքիր է նաև հակառակ ազդեցության առկայության կամ բացակայության հարցի ուսումնասիրությունը: Միաժամանակ, ինքնորոշման իրավունքի հիման վրա անկախություն հռչակած պետության միջազգային ճանաչումը տեղի է ունենում միայն տասնամյակներ անց: Դա ոչ միայն սասանում է միջազգային իրավունքի և ՄԱԿ-ի գործունեության արդյունավետության նկատմամբ հավատը, լուրջ խոչընդոտ է դառնում դրանց հիման վրա նոր ստեղծված պետությունների զարգացման համար, այլև, վերջինի հետևանքով, հնարավորություն չի տալիս վերացնելու լարվածությունն այդ տարածաշրջաններում և այդ պետությունների բնակչությունների տառապանքները՝ կասկածի տակ դնելով ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների ձևակերպման անկեղծությունը: Հետևաբար, խիստ կարևոր է պարզել, թե ինչ պատճառով է առաջանում նման խզումը օրինական ինքնորոշման ու ինքնորոշման հիման վրա ձևավորված պետության միջազգային ճանաչման միջև, արդյո՞ք այդտեղ դերակատարություն ունի դեռևս չճանաչված պետության կայացած չլինելու հանգամանքը: Կամ, քանի որ պետության ճանաչումն իր իրավասուբյեկտության ճանաչումն է, իսկ դրա դրսևորման հատկանիշները սահմանված են Մոնտեվիդեոյի կոնվենցիայով⁷, ապա միգուցե դրանց համապատասխանեցման հետ է կապված ինքնորոշման իրավունքի կիրառումից մինչ ճանաչում ընկած ժամանակահատվածի տասնամյակների տևողությունը: Այս հարցադրումների պատասխանները պետք է որոնել նման գործընթացներում երկու՝ իրավական և քաղաքական բաղադրիչների բախումների տիրույթում, քանի որ, եթե ինքնորոշումը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման խնդիր է, ապա միջազգային ճանաչումը (անդամակցությունը ՄԱԿ-ին)

⁷ Montevideo convention on the rights and duties of states, <http://www.taiwandocuments.org/montevideo01.html>, (23.06.2016).

զուտ քաղաքական իրադարձություն է, որը դրսևորվում է ՄԱԿ-ի անդամ երկրների որևէ պայմանականություն չենթադրող քվեարկությամբ: Հարկ է պարզել, արդյոք նման քվեարկության կամ մինչ այդ գործընթացի ձգձգման հիմքում սուկ անդամ պետությունների շահերի բախումն է, թե, այնուամենայնիվ, միջազգային իրավունքում ինքնորոշմանն առնչվող նորմերը թերի են կամ, ինչպես ումանք են պնդում, ունեն անորոշություններ:

Պետության բնականոն էվոյուցիայի փուլերը

Պետության միջազգային ճանաչման և կայացման բազմավեկտոր քաղաքական գործընթացների և, հատկապես, դրանց կապի ուսումնասիրությունը հարկ է իրականացնել փուլային տրամաբանությամբ, քանի որ յուրաքանչյուր պետության բնականոն էվոյուցիան պետք է ընթանա հետևյալ երեք փուլերով՝ անկախության հռչակում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին)՝ որպես պետության միջազգային իրավասուբյեկտության պարտադիր պայման, և պետության կայացում:

Քանի որ անկախության օրինական հռչակումը, որպես կանոն, պետք է իրականացվի միջազգային իրավունքի շրջանակներում՝ ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա, ապա առաջին փուլի ուսումնասիրության հիմքում գործընթացի համապատասխանությունն է այդ իրավունքին առնչվող նորմերին: Թվում է թե առկա են բոլոր հնարավորությունները՝ միջազգային ճանաչման հետ կապված արագ որոշումներ ընդունելու համար, քանի որ ինքնորոշման իրավունքի նորմերը լիարժեք և սպառիչ սահմանում են խնդրի կարգավորման բոլոր իրավական հիմքերը⁸: Այսպես, ՄԱԿ-ի կանոնադրությունը (հոդված 1.2) ազգերի ինքնորոշման սկզբունքը սահմանում է որպես ՄԱԿ-ի գլխավոր նպատակներից մեկի իրականացման հիմքը. «Չարգանել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն

⁸ **Torosyan T.**, Resolution of Intractable Conflicts. *Iran and Caucasus*, 2013, **17**, 1, 120-129.

համընդհանուր խաղաղության ամրապնդման»⁹: Ազգերի ինքնորոշման սկզբունքը ներկայացնող ՄԱԿ-ի մյուս հիմնարար փաստաթուղթն է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹⁰ և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹¹: Դրանց առաջին հոդվածներն արձանագրում են. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»: Հատկանշական է, որ որևէ սահմանափակում կամ վերապահում այդ իրավունքի համար ոչ կանոնադրությունը և այդ դաշնագրերը չեն սահմանում: Առանձնահատուկ կարևորություն ունի 1970թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագիրը¹², որը կողմնակցիկացիոն բնույթ ունի, սահմանում է ազգերի իրավահավասարությունը և ինքնորոշումը՝ որպես միջազգային իրավունքի սկզբունք, ամրագրելով, որ ինքնորոշումը բոլոր ժողովուրդներին վերաբերող իրավունք է, որի կենսագործումը պահանջվում է ՄԱԿ-ի կանոնադրությամբ. «Համաձայն ՄԱԿ կանոնադրությունում ամրագրված ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի, բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը, հետամուտ լինել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ համաձայն կանոնադրության դրույթների»: Կարևոր է նաև, որ այդ հռչակագիրը սահմանում է ինչպես ինքնորոշման իրավունքի

⁹ ՄԱԿ կանոնադրություն,

http://www.un.am/res/UN%20Treaties/Charter_arm_unicode.pdf, (20.08.2016):

¹⁰ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, http://www.un.am/up/file/III_4.pdf, (20.08.2016):

¹¹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf, (20.08.2016):

¹² Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, <http://www.un-documents.net/a25r2625.htm>, (20.08.2016).

իրացման հնարավոր ձևերն, այնպես էլ մեխանիզմը. «Ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման ձևերն են անկախ և սուվերեն պետության ստեղծումը, ազատ միացումն անկախ պետության կամ միավորումը դրա հետ, կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակը, որն ազատորեն կորոշի այդ ժողովուրդը»¹³: Հետևաբար միջազգային իրավունքը հստակորեն և սպառիչ սահմանում է բոլոր իրավական հիմքերը ինքնորոշման իրավունքի կիրառման սուբյեկտի, ձևերի և մեխանիզմների, հետևաբար և ճանաչման համար: Վերջինս ակնհայտ է, քանի որ պարզ տրամաբանությամբ ինքնորոշման իրավունքի օրինական կիրառման դեպքում, երբ կամքի ազատ արտահայտմամբ այն կիրառող ժողովուրդն ընտրում է վերոհիշյալ ձևերից մեկն, օրինակ, անկախության հռչակումը, որն է իրավական խոչընդոտ կամ անորոշություն հնարավոր չէ գտնել՝ այն մերժելու համար: Սակայն նույն պարզ տրամաբանությամբ կան մի քանի հանգամանքներ, որոնք կարող են հետաձգել ճանաչումը, երբ «մայր պետությունը» չի ճանաչում իրենից անկախացած պետությունը: Մասնավորապես, անկախանալու իրավական հիմքերի լիարժեքության վերաբերյալ սպառիչ կարծիք ունենալու նպատակով «մայր պետությունը» կարող է դիմել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային, որպեսզի վերջինս հայցի ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) մասնագիտական կարծիքը՝ միջազգային իրավունքի նորմերին ինքնորոշման այդ ակտի համապատասխանության վերաբերյալ: ԱՄԴ-ն վերջին չորս տասնամյակներում սպառիչ մասնագիտական կարծիք է տվել ցանկացած ինքնորոշման դեպքի վերաբերյալ, որի առնչությամբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հայցել է նման կարծիք: Ընդ որում, ԱՄԴ-ն, որպես կանոն, մոտ երկու տարվա ընթացքում ձևավորում է կարծիքը: Այն թեև ունի խորհրդատվական նշանակություն, սակայն համարվում է խնդրի վերաբերյալ լիարժեք և սպառիչ իրավական գնահատական:¹⁴ Այդուհանդերձ, անգամ ԱՄԴ-ի կարծիքի հրապարակումից հետո ինքնորոշման իրավունքի հիման

¹³Ibid.

¹⁴ Adopting consensus Resolution, General Assembly Acknowledges World Court Opinion on Kosovo, Welcomes European Union Readiness to Facilitate Process of Dialogue. <http://www.un.org/press/en/2010/ga10980.doc.htm>

վրա անկախություն հռչակած պետության միջազգային ճանաչումը կարող է ձգձգվել տասնամյակներ: Ինչո՞ւ:

Պետության ճանաչում. իրավական, թե՞ քաղաքական խնդիր

Պետության ճանաչման հայեցակարգային սահմանման փնտրտուքի յուրաքանչյուր փորձ գրեթե անմիջապես տեղափոխվում է միջազգային իրավական ժառանգությունը երկու ճակատների բաժանած երկարատև բանավեճի հարթություն. արդյո՞ք ճանաչվածությունը էական պահանջ է պետականության համար, ինչպես պնդում են սահմանադիր (constitutive) դպրոցի ներկայացուցիչները, թե՞ արդեն գոյություն ունեցող փաստացի կարգավիճակի հաստատում է, ինչպես հավաստում են հռչակագրային (declaratory) դպրոցի ներկայացուցիչները: Ըստ այդմ, մինչ ճանաչման գործընթացի շրջանակներում պետությունների վարքագծին և փորձին անդրադառնալը, հարկ է առաջին հերթին դիտարկել ճանաչման բնույթին առնչվող երկսայրաբանությունը: 19-րդ դարում ձևավորված ավանդույթը հանգեցրել էր նրան, որ ուշադրությունը կենտրոնանում էր բացառապես ճանաչման գործընթացի և դրա իրավական հետևանքների, այլ ոչ թե տարբեր տարածքային միավորների կառավարման մարմինների կարգավիճակի որոշման կանոնների մշակման, իրավունակության և նմանատիպ այլ խնդիրների վրա: Ինչ-որ առումով, դա անխուսափելի էր, քանի դեռ սահմանադիր ուղղությունը պահպանում էր իր ազդեցությունը, քանի որ, համաձայն վերջինիս, այդպիսի կանոններ չեն կարող գոյություն ունենալ¹⁵:

Համաձայն հռչակագրային դպրոցի, պետականությունը կանխորոշվում է պայմանների հետևյալ համախմբով՝ մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն և այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն: Այդ չափանիշներն ամրագրված են Մոնտեվիդեոյի կոնվենցիայի Հոդված 1-ում և հետագայում զարգացում են ապրել և մշակվել իրավական

¹⁵ Crawford J., *The Creation of States in International Law*, Oxford University Press, Oxford, 2nd edition, 2006, p. 19.

դոկտրինների և դատական պրակտիկայի շրջանակներում¹⁶: Ըստ էության, Մոնտեվիդեոյի կոնվենցիան ոչ միայն ներկայացնում է պետականության հիմնական հատկանիշներն, այլև անդրադառնում է պետականության «միջազգայնորեն ընդունմանը», այն է՝ պետականության, թերևս, ամենաբարդ և ամենաքաղաքականացված ասպեկտին՝ ճանաչմանը: Միաժամանակ, այն առաջ բերեց մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ կոնկրետ ինչն է ստանում ճանաչում՝ պետությունը թե՞ կառավարությունը, *de jure* թե՞ *de facto* ճանաչում (այն է՝ կառավարության լեգիտիմություն թե՞ դրա փաստական գոյություն), և վերջապես՝ որոնք են ճանաչման իրավական հետևանքները¹⁷: Համաձայն հռչակագրային տեսության, երբ միավորը բավարարում է այդ չափանիշներին, այն անմիջապես համարվում է *erga omnes* պետություն: Այսպիսով, հռչակագրային տեսությունը հավաստում է, որ ճանաչումը ոչ այլ ինչ է, քան փաստական իրավիճակի պաշտոնական հաստատում. մի գործընթաց, որը սկսվում է այն պահից, երբ վերոնշյալ չափանիշները բավարարվում են և միավորը դառնում է պետություն: Ֆորմալ ճանաչումը, անշուշտ, ունենում է ուրույն ազդեցություն ճանաչող և ճանաչվող պետությունների հարաբերությունների վրա, սակայն պետականության պարտադիր տարր չէ¹⁸:

Այսպես կոչված, «մրցակից» տեսությունը սահմանադիր տեսությունն է, ըստ որի, քանի որ պետությունների համայնքը, ըստ էության, քաղաքական համայնք է, ապա անդամակցությունն այդ համայնքին կախված է արդեն գոյություն ունեցող անդամներից: Նմանատիպ մոտեցման շրջանակներում, ճանաչումը կենսական նշանակություն ունի: Նույնիսկ եթե բոլոր չորս չափանիշները բավարարված են, պետությունը, որը դեռ չի ճանաչվել, ծանր կացության մեջ կհայտնվի և ծայրահեղ դժվար կլինի պահպանել սեփական գոյությունը, ինչը հաստատեց Բիաֆրայի օրինակը: Վերջինս, անցնելով Նիգերիայի հետ անջատման համար ծավալված արյունահեղ պատերազմի միջով, 1967թ. հռչակեց իր անկախությունը,

¹⁶ Ryngaert C., Sobrie S., Op. cit.

¹⁷ Klabbers J., Op. cit., pp. 72-73.

¹⁸ Ryngaert C., Sobrie S., Op. cit.

սակայն ճանաչվեց միայն հինգ պետությունների կողմից և ընդամենը երեք տարի անց կրկին ընդգրկվեց Նիգերիայի կազմում¹⁹: Այսպիսով, համաձայն այս տեսության, միավորը դառնում է պետություն միայն երբ այն ճանաչվում է որպես այդպիսին: Հետևաբար, ճանաչումը *conditio sine qua non* (կենսական պայման) է պետականության համար: Նման մոտեցումը կիսում է նաև միջազգային իրավունքի ավանդական պոզիտիվիստական հայեցակարգը, որը ներկայացնում է ճանաչումը որպես *jus gentium voluntarium* (voluntary law of nations) փոխհամաձայնություն: միավորը կարող է դառնալ պետություն միայն մյուս պետությունների համաձայնությամբ: Արդյունքում, պետակա-նության նման խրթին հարցը սահմանափակվում է միայն պրագմատիկ խնդրի դիտարկմամբ՝ ճանաչվել է արդյոք միավորը այլ պետությունների կողմից: Ըստ ամենայնի, սահմանադիր տեսությունն ունի մի շարք լուրջ բաղթողումներ, հատկապես կապված այն խնդրի հետ, երբ պետությունը ճանաչվել է միայն մի շարք պետությունների կողմից, ինչպես, օրինակ, Բիաֆրայի դեպքում: Հարց է առաջանում, թե քանի՞ պետությունների կողմից ճանաչվածությունն է միավորին «փոխակերպում» ճանաչված պետության, ինչպես նաև ի՞նչ չափորոշիչներով է կայացվում ճանաչման որոշումը՝ փաստեր, նորմեր, աշխարհաքաղաքական նկատառումներ, թե՞ այլ գործոնների համախումբ: Այսպիսով, նմանատիպ մոտեցման ավելի արմատական և մանրագնին դիտարկումը ցույց է տալիս, որ, ի վերջո, այս տեսությունը հանգեցնում է անտրամաբանական և սեփական հայեցակարգին հակասող եզրակացության, որ պետականությունն ավելի շատ հարաբերական, այլ ոչ թե բացարձակ հասկացություն է²⁰:

Ժամանակակից իրավագիտության շրջանակներում գերիշխող դիրք ունի հռչակագրային տեսությունը: Վերջինիս հաջողության գրավականն այն է, որ պետականության «շնորհման» հարցում փորձում է պետություններին զրկել քաղաքական կամայականությունների վրա հիմնված որոշումներ ընդունելու հնարավորությունից՝ առաջադրելով օբյեկտիվ իրավական նորմերի համախումբ: Այդուհան-

¹⁹ Klabbers J., Op. cit., p. 73.

²⁰ Ryngaert C., Sobrie S., Op. cit.

դերձ, այս տեսությունը նույնպես ունի թերություններ: Առաջին հերթին, հաճախ նշվում է, որ չճանաչված պետությունները չունեն միջազգային իրավասուբյեկտություն և, հետևաբար, չեն կարող համարվել պետություն՝ անգամ եթե բավարարում են բոլոր վերը նշված չափանիշներին: Մեկ այլ խնդիր է, որ տեսության շրջանակներում ուշադրություն չի դարձվում այն բանի վրա, թե ինչ ճանապարհով են պետությունները կարողացել հասնել անհրաժեշտ չափանիշների բավարարմանը, ինչի արդյունքում միավորները կարող են դառնալ պետություն՝ միջազգային իրավունքի կոպիտ խախտումների միջոցով: Պետություններն արձագանքում են նման իրադարձություններին՝ ճանաչում չտրամադրելով այդ միավորներին, պատժամիջոց, որը չի համապատասխանում հոչակագրային տեսության դրույթներին: Ավելի արմատական մոտեցման դեպքում դժվար չէ նկատել, որ հակում կա խնդիրը հանգեցնել հոչակագրային այն ենթադրությանը, որ միավորը կարող է ունենալ «պետություն» իրավական որակում, որպես այդպիսին: «Պետականության» նման գաղափարն ունի փաստերն իրավունքի հետ շփոթելու միտում՝ *ex factis jus non oritur*²¹: Ավելին, պարզ է, որ ճանաչումը, ըստ էության, քաղաքական գործընթաց է. իրավական չափանիշները, իհարկե, ներկայացնում են որոշակի ուղեցույց (և շատ քիչ պետություններ են ճանաչվում՝ առանց արձանագրելու առնվազն բավարար արդյունքներ չափանիշներից գոնե մի մասի շրջանակներում), սակայն ճանաչելու կամ չճանաչելու որոշումներն ամբողջապես քաղաքական են՝ գերազանցապես առաջնորդվող քաղաքական շարժառիթներով²²:

Սահմանադիր (որի շրջանակներում ճանաչումը լիապես նորմատիվային է) և դրա «մրցակից»՝ հոչակագրային (որի շրջանակներում ճանաչումը չունի որևէ նորմատիվային արժեք) տեսությունների միջև անջրպետը թվում է անհաղթահարելի: Մակայն, մի շարք հեղինակներ առաջարկում են այդ անջրպետը հաղթահարելու «երրորդ ուղի», համաձայն որի ճանաչումը ո՛չ սոսկ սահմանադիր է, ո՛չ սոսկ հոչակագրային: Համաձայն նման մոտեցման, պետականությունը

²¹ Ibid.

²² Klabbers J., Op. cit., p. 73.

դիտարկվում է արդյունավետության շրջանակներում, իսկ ճանաչումը որպես քաղաքական քայլ, որն ավելացնում է միավորի միջազգային արդյունավետությունը: Ճանաչումը, որպես այդպիսին, և՛ սահմանադիր է, քանի որ այն ստեղծում է բարձր մակարդակի հարաբերություններ ճանաչողի և ճանաչվողի միջև, և՛ հոչակագրային, քանի որ այն ինքնին միավորին չի շնորհում պետականություն: Այդուհանդերձ, այս փակուղուց ելք գտնելու փորձերի փոխարեն, կարելի է կասկածի տակ առնել այս տեսական բանավեճի գործնական արդիականությունը: Ավելին, կարելի է առաջարկել մեկ այլ մեկնաբանություն, որը ոչ միայն հաստատում է միջազգային իրավունքի գործնական նշանակությունն, այլև բացահատում է Մոնտեվիդեոյի կոնվենցիայի նշանակությունը՝ որպես ինքնորոշման իրավունքը և ինքնորոշված պետության ճանաչումը կապող փաստաթուղթ:

Իհարկե, պետության ճանաչումը քաղաքական գործընթաց է, քանի որ իրականացվում է ՄԱԿ-ի անդամ պետությունների քվեարկությամբ, որը որևէ պայմանով սահմանափակված չէ: Կարող է թվալ, քանի որ միջազգային իրավունքը սահմանել է չափանիշներ, որոնք պետք է բավարարի պետությունը, ապա պետության ճանաչումը պետք է պայմանավորված լինի այդ չափանիշների ապահովմամբ: Խոսքը Մոնտեվիդեոյի կոնվենցիայի մասին է, որի Հոդված 1-ն ամրագրում է. «Պետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, և դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն»²³: Մակայն կան մի շարք հանգամանքներ, որոնք մատնանշում են, որ այդ չափանիշները ոչ թե պետության ճանաչման հիմք են, այլ ունեն միանգամայն այլ նշանակություն: Դժվար չէ նկատել, որ «կառավարություն» այստեղ օգտագործված է ոչ միայն պետական կառավարման բարձրագույն մարմինների, այլև երկրի ամբողջ տարածքում նրանց լիարժեք գործունեության առկայության իմաստով, ինչը դժվար չափվող հատկանիշ է: Այդպիսին է նաև դ)

²³Montevideo convention on the rights and duties of states, <http://www.taiwandocuments.org/montevideo01.html>, (23.06.2016).

չափանիշը, առավել ևս դեռևս չճանաչված պետության համար, քանի որ ՄԱԿ-ի անդամ երկրները, որպես կանոն, խուսափում են չճանաչված պետությունների հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելուց: Թերևս այդ կոնվենցիայի նշանակությունը ներկայացնող միակ ողջամիտ մեկնաբանությունն այն է, որ այդ չափանիշները բնութագրում են պետության հոչակումից մինչև ճանաչում ընկած շրջանի եությունը, որի ընթացքում հաստատվում է կայուն վիճակ: Դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ առաջին երկուսի հստակությունը անհրաժեշտ պայման է ինքնորոշման իրավունքի իրացման՝ ինքնորոշվող ժողովրդի կամքի արտահայտման համար: Հետևաբար Կոնվենցիայի Հոդված 1-ի չորս չափանիշների կապը պետության անկախության ճանաչման հետ կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ պետությունը ճանաչվում է, եթե այն հոչակվել է կոնկրետ տարածքում (բ չափանիշ) ապրող բնակչության կամքի ազատ արտահայտմամբ (ա չափանիշ), այդ տարածքն ամբողջությամբ վերահսկվում է կառավարության կողմից (գ չափանիշ), որը կարողանում է հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ (դ չափանիշ): Վերջինն անհրաժեշտ է, քանի որ ճանաչման վերջին ակորդը՝ ՄԱԿ-ին անդամակցության հարցի քննարկման ժամանակ ճանաչվող պետության օգտին քվեարկությունը, հնարավոր է միայն այդ պետությունների պատրաստակամության դեպքում: Կոնվենցիայի նման մեկնաբանությունը վերացնում է այդ փաստաթղթի թվացյալ հակասությունը ինքնորոշման իրավունքի հետ. առաջին հայացքից կարող է թվալ, թե Կոնվենցիայում սահմանված չափանիշները լրացուցիչ պայմաններ են առաջադրում ինքնորոշման իրավունքի կիրառման համար, մինչդեռ վերջինս ունի միջազգային իրավունքի նորմի բարձրագույն կարգավիճակ և վերոհիշյալ երեք հիմնարար փաստաթղթերը որևէ սահմանափակում չեն նախատեսում: Առաջարկվող մեկնաբանությունը ցույց է տալիս, որ որևէ հակասություն չկա միջազգային իրավունքի այդ հիմնարար փաստաթղթերի միջև: Ավելին, Մոնտեվիդեոյի կոնվենցիան նախանշում է այն ուղին, որը պետության հոչակումից տանում է դեպի ճանաչում:

Ժամանակակից պետությունների փորձն առաջարկում է «բարդ դեպքերի» լայն ընտրանի, որոնք ամբողջապես չեն կարող «տեղավորվել» իրավական տեսություններից և ոչ մեկի շրջանակներում, սակայն հաստատում են բերված մեկնաբանության հավաստիությունը: Բարայելը դրա վառ օրինակ է. այն ունի պետականության բոլոր հատկանիշները, սակայն չի ճանաչվել որպես պետություն մի շարք արաբական պետությունների կողմից: Այդ նույն պետությունները, այդուհանդերձ, պահանջում են Բարայելին պատասխանատվության ենթարկել միջազգային իրավունքը խախտելու համար: Նման պրակտիկան, որի շրջանակներում ճանաչումը նորմատիվային է, սակայն չի արգելափակում միջազգային իրավասուբյեկտությունը, չի կարող լիարժեքորեն բացատրվել ո՛չ սահմանադիր, ոչ՝ հոչակագրային տեսության շրջանակներում: Սակայն, դա չի նշանակում, որ ճանաչման նման խրթին գործընթացը պետք է հիմնված լինի միայն պետական (այն է՝ քաղաքական) պրակտիկայի վրա: Միջազգային իրավունքը հիմնված է նուրբ հավասարակշռման վրա՝ մի կողմից պահպանելով տեսական շրջանակներում ամրագրված նորմատիվային սկզբունքները, առանց որոնց միջազգային իրավունքը կկորցնեի իր կարգավիճակը որպես «իրավունք», մյուս կողմից՝ հարմարվելով մշտապես փոփոխվող քաղաքական փորձին, առանց որի միջազգային իրավունքը կկորցնեի իր արդյունավետությունը և, ի վերջո, իր լեգիտիմությունը: Դա հատկապես տեսանելի է, երբ հարցը վերաբերում է պետության ճանաչմանը, որտեղ քաղաքական պետական պրակտիկան և նորմատիվային միջազգային իրավունքն անխուսափելիորեն միախառնվում են²⁴: Այդ նպատակով ստորև կդիտարկվեն մի շարք պետությունների ճանաչման գործընթացները:

Ճանաչման գործընթացների դեպքերի վերլուծություն

ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզումով ոչ միայն Եվրոպայում էապես աճեց էթնոքաղաքական հակամարտությունների թիվն, այլև

²⁴ Ryngaert C., Sobrie S., Op. cit.

ավելի սրվեցին դրանց կարգավորման ընթացքում իրավական և քաղաքական բաղադրիչների բախումները: Ավելին, ձևավորվող պետությունների ճանաչման գործընթացներում նկատվեց արմատական եվոլյուցիայի սկիզբը: Այդ զարգացումները հատկապես ցայտուն երևում են կոնկրետ դեպքերի դիտարկման ժամանակ:

Եվրոպական համայնքի արձագանքը սկսեց դրսևորվել Հարավսլավիայի փլուզումից անմիջապես հետո՝ սուր բանավեճեր ծավալվեցին Բալկաններում առաջացած ճգնաժամի պայմաններում ձևավորվող ճանաչման քաղաքականության շրջանակներում: 1992թ. հունվարի 15-ին Եվրոպական համայնքը, հիմնվելով Բադինտերի հանձնաժողովի դրական կարծիքի վրա²⁵, որոշեց ճանաչել Սլովենիան և Խորվաթիան որպես անկախ պետություններ, ինչը, հույս էր ներշնչում, որ կարող են կիրառվել խոստումնալից նոր մոտեցումներ՝ բավական ճկուն հնարավորություններ ստեղծելով բարդ հարցերի լուծման համար: Խորվաթիան այդ ժամանակահատվածում չունեի հաստատուն կառավարություն, որն ի գործու կլինեի վերահսկել պետության ողջ տարածքը: Ուստի, ճանաչում շնորհելու որոշումը բացահայտորեն շեղվում էր հիմնական ավանդական պահանջներից, մասնավորապես, Մոնտեվիդեոյի կոնվենցիայի չափանիշներից: Մինևույն ժամանակ, Խորվաթիան ճանաչելու որոշումը շեղվում էր նաև պետությունների գնահատման եվրոպական մոտեցումներից, քանի որ Բադինտերի հանձնաժողովն արձանագրել էր, որ Խորվաթիայի Սահմանադրությունը լիովին չի համապատասխանում փոքրամասնությունների պաշտպանության պահանջներին: 1992թ. ապրիլի 7-ին Բոսնիայի և Հերցեգովինայի ճանաչման գործընթացում արձանագրվեց պետության ճանաչման իրավական շրջանակի նույնատեսակ ազատ մեկնաբանություն: Այնտեղ չկար արդյունավետ կառավարություն, որն ի գործու լինեի վերահսկողություն սահմանել պետության տարածքի գոնե զգալի մասի վրա, ինչը ստիպված էր ընդունել անգամ երկրի նախագահը՝ նշելով, որ իր պետությունը չի

²⁵ The Opinion of the Badinter Arbitration Committee: A Second Breath for the Self-Determination of Peoples, http://www.thomasfleiner.ch/files/categories/IntensivkursII/Badinter_Badi.pdf, (03.09.2016).

կարող պաշտպանել իր անկախությունն առանց արտաքին ռազմական օգնության: Այդ իրավիճակը շուտով հանգեցրեց արյունահեղ քաղաքացիական պատերազմի, ինչն ակնհայտորեն չէր ապահովում այնպիսի միջավայր, որում մարդու իրավունքները պատշաճ կերպով պաշտպանված են: Մինչ այդ պետությունների ճանաչման գործընթացները չէին համապատասխանում ո՛չ առկա իրավական շրջանակին, ո՛չ էլ ձևավորվող նոր մոտեցումներին: Մակեդոնիան դարձավ հակառակ երևույթի գոհր. թեև այն բավարարում էր բոլոր հնարավոր չափանիշներին, սկզբնական փուլում այն ճանաչվեց միայն մի քանի պետությունների կողմից: Չնայած Բաղինտերի հանձնաժողովը դրական կարծիք էր ներկայացրել Մակեդոնիայի դեպքի համար, Հունաստանը վետո դրեց վերջինիս ճանաչման վրա, և այդ իրավիճակը շտկվեց միայն 1993թ.²⁶:

90-ականների սկզբի այս զարգացումներն արդեն վկայում էին, որ տեղի են ունենում նոր բնույթի ինքնորոշման գործընթացներ, որոնց արագ և անկորուստ հանգուցալուծումները պահանջում են միջազգային իրավունքի համապատասխան նորմերի ճշգրիտ մեկնաբանություններ և հստակ կիրառումներ, մինչդեռ պետությունների կողմից այդ նորմերի մեկնաբանության ձևերի ու գործընթացների օրինականության ու արդյունավետության նկատմամբ լուրջ կասկածներ են առաջացրել.

- I. Դրանցից առաջինի աղբյուրը վերաբերում է հիմնարար սկզբունքների, մասնավորապես, ազգերի ինքնորոշման իրավունքի կամայական մեկնաբանություններին: Հարավսլավիայի փորձը ցույց տվեց, որ ազգերի ինքնորոշման իրավունքն այլևս չի կիրառվում սուկ գաղութային համատեքստում, ինչպես նախկինում էր: Դա պայմանավորված էր երկու հանգամանքով. նախ, նոր պետությունների ձևավորման գործընթացը դարձել էր նաև եվրոպական՝ գաղութային ենթատեքստից զերծ երևույթ, միաժամանակ, միջազգային իրավունքի համապատասխան նորմերն այդ իրավունքի վրա որևէ սահմանափակում չեն դնում, մինչդեռ տարբեր

²⁶ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

պետությունների ներկայացուցիչներ տարատեսակ մեկնաբանություններով աղավաղում են պատկերը:

- II. Խեղաթյուրումների երկրորդ աղբյուրը նոր պահանջների և ավանդական չափանիշների միջև հարաբերակցությունն է: Ավելի ստույգ, պետությունների ճանաչման վերոնշյալ դեպքերը կասկածի տակ դրեցին Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշների կիրառման հնարավորությունները: Հարց ծագեց, թե արդյո՞ք նոր մոտեցումների հիման վրա ձևավորվելու են չափանիշներ, որոնք փոխարինելու են ավանդականներին, թե՞ այդ նոր մոտեցումները միտված են պարզապես հստակեցնելու արդեն գոյություն ունեցող չափանիշների կիրառման հնարավորությունները:
- III. Երրորդ խնդիրը վերաբերում է միջազգային իրավունքի հիմքերին և քաղաքական կամայականությունների հետ նրա «բարդ հարաբերություններին», մասնավորապես, թե ինչքանով է դեռևս իմաստավոր պետության ճանաչման չափանիշներին իրավական անդրադարձը (դրանց չափելիության ապահովման նպատակով), երբ այդ չափանիշները կարող են այս կամ այն միավորի ճանաչման գործընթացում մի կողմ դրվել՝ կախված որոշում կայացնողների քաղաքական նպատակահարմարությունից:

Կարող է թվալ, որ Եվրոպական համայնքի կիրառած նոր մոտեցումները գլխավորապես կամ գուցե ամբողջությամբ քաղաքական էին, չնայած Բադինտերի հանձնաժողովի իրավական խոսույթի և միջամտության առկայությանը²⁷: Այդ էվոլյուցիայի արդյունքն այդպես էլ մնաց խիստ կասկածելի, և միակ բանը, որ հնարավոր էր անել՝ հետևել, թե արդյոք կամ ինչպես պետությունների ճանաչման հաջորդող դեպքերը հստակություն կմտցնեն այդ հարցում:

Բուռն զարգացումների երկրորդ փուլի խորհրդանշական սկիզբը կարելի է համարել 2008թ. փետրվարի 17-ը, երբ Կոսովոն հռչակեց իր անկախությունը Սերբիայից: Դա կարծես թե, ազդարարեց պետության ճանաչմանն առնչվող վիճահարույց դեպքերով լի տարվա

²⁷ **Craven M.**, *The European Community Arbitration Commission in Yugoslavia, British Yearbook of International Law*, **66**, 1996, pp. 333-413.

մեկնարկը: Այդ դեպքերն ուրույն հնարավորություն էին կանոնակարգելու այն խառնաշփոթը, որի մեջ հայտնվել էր պետության ճանաչման գործընթացը գրեթե 20 տարի առաջ՝ Հարավսլավիայի փլուզումից ի վեր:

Կոսովոյի անկախության հռչակումից հետո, Սերբիայի ներկայացրած բանաձևի նախագծի հիման վրա ՄԱԿ Գլխավոր ասամբլեան ընդունեց 63/3 բանաձևը՝ հայցելով Արդարադատության միջազգային դատարանի խորհրդակցական կարծիքն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին: 2010թ. հունիսի 22-ին ներկայացրած կարծիքում Արդարադատության միջազգային դատարանը Կոսովոյի անկախության հռչակումը որակեց անհամատեղելի ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1244 (1999թ.) բանաձևի հետ²⁸, որի հիման վրա ձևավորվել էին Կոսովոյում ՄԱԿ առաքելությունը²⁹, «Կոսովոյում ժամանակավոր ինքնակառավարման սահմանադրական շրջանակը» (2001թ.)³⁰: Սակայն, ավելի կարևոր է այն փաստը, որ Դատարանը չի անդրադարձել անկախության հռչակման հետևանքներին, այդ թվում՝ Կոսովոյի ճանաչմանը: Սակայն, անհնար է, որ անկախության հռչակումն օրինական լինի (ինչպիսին Կոսովոյի դեպքում այն որակել է Արդարադատության միջազգային դատարանը), իսկ դրա արդյունքում ձևավորված պետության ճանաչումն՝ անօրինական: Կոսովոյի անջատման իրավունքի առնչությամբ Դատարանը սահմանել է, որ «միանգամայն հնարավոր է, որ կոնկրետ գործողություն, ինչպիսին է անկախության միակողմանի հռչակումը, չհանդիսանա միջազգային իրավունքի խախտում՝ առանց դրան շնորհիվ իրավունքի պարտադիր հաստատման»³¹: Ըստ էության,

²⁸ UN Security Council Resolution 1244 (1999), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement>, (05.09.2016).

²⁹ UNMIK (United Nations Interim Administration Mission in Kosovo), <https://unmik.unmissions.org/>, (05.09.2016).

³⁰ Constitutional Framework For Provisional Self-Government In Kosovo, http://www.assembly-kosova.org/common/docs/FrameworkPocket_ENG_Dec2002.pdf, (05.09.2016).

³¹ Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo, <http://www.icj-cij.org/docket/files/141/16010.pdf>, (05.09.2016).

Կոսովոյի հարցով Արդարադատության միջազգային դատարանի կարծիքի խորքային ուսումնասիրության դեպքում ակնառու է դառնում այն փաստը, որ այն առհասարակ մերժում է սեցեսիան միջազգային իրավունքի խախտում համարելու փորձերը, եթե դա չի ուղեկցվել ուժի ապօրինի կիրառմամբ կամ միջազգային իրավունքի նորմերի աղաղակող խախտումներով: Հատկանշական է նաև, որ Դատարանն ամրագրում է, որ «տարածքային ամբողջականության սկզբունքը սահմանափակվում է [ՄԱԿ-ի անդամ] պետությունների միջև հարաբերությունների կարգավորման հարցերով»³²: Հետևաբար անջատումը և անկախության միակողմանի հռչակումը, վերաբերելով ներպետական հարաբերություններին (երբ պետության ներսում գոյություն ունեցող միավորն անջատվում է «մայր պետությունից»), չի խախտում տարածքային ամբողջականության սկզբունքը: Այսպես թե այնպես, միջազգային իրավունքի շրջանակներում Կոսովոյի ճանաչումը չի կարող համարվել անօրինական: Թերևս, ուշադրության արժանի միակ փաստարկը, որ ներկայացնում են մի շարք վերլուծաբաններ, 1999թ. Սերբիայի դեմ ՆԱՏՕ-ի կողմից ուժի կիրառումն է՝ առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համաձայնությունը ստանալու³³, ինչն էլ հանգեցրեց Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր միջազգային կառավարման կազմավորմանը: Նրանք նշում են, որ ուժի նմանատիպ կիրառումը կարող է խախտել *jus cogens* նորմը՝ փաստորեն, արգելելով պետություններին ճանաչել դրան հաջորդած իրողությունը՝ Կոսովոյի պետականությունը: Սակայն ակնհայտ է, որ տվյալ դեպքում ուժ կիրառողը Կոսովոն չէ և այդ փաստարկը ներկայացնողները դեռ պետք է ապացուցեն, որ ՆԱՏՕ-ի այդ քայլը ազդել է Կոսովոյի ժողովրդի կամքի ազատ արտահայտման

³² Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo, <http://www.icj-cij.org/docket/files/141/16010.pdf>, (05.09.2016).

³³ NATO Action Against Serbian Military Targets Prompts Divergent Views As Security Council Holds Urgent Meeting On Situation In Kosovo, <http://www.un.org/press/en/1999/19990324.sc6657.html>, (08.09.2016); **Roberts A.**, NATO's 'Humanitarian War' over Kosovo, The International Institute for Strategic Studies, *Survival*, vol. 41, no. 3, 1999, pp. 102-123; **Simma B.**, NATO, the UN and the Use of Force: Legal Aspects, *European Journal of International Law*, 10 (1), 1999, pp. 1-22; **Wippman D.**, Kosovo and the Limits of International Law, *Fordham International Law Journal*, Volume 25, Issue 1, 2001, pp. 129-150.

վրա: Գործնականում, սակայն, իրավունքն առաջնային դերակատարություն չի ունեցել Կոստվոյի ճանաչման գործընթացում: Կոստվոյի անկախության հռչակումից հետո, ԵՄ Խորհուրդը հայտարարեց, որ «անդամ պետությունները որոշում կկայացնեն Կոստվոյի հետ իրենց հարաբերությունների վերաբերյալ՝ համաձայն իրենց պետական պրակտիկայի և միջազգային իրավունքի»³⁴: Արդյունքում, «պետական պրակտիկան», որը քաղաքական նպատակահարմարության դիվանագիտական կադապարն է, ճանաչման գործընթացում երկրորդ պլան է մղել միջազգային իրավունքը: Այդպիսով, ճանաչում շնորհելու ԵՄ միասնական պրակտիկան ձախողվեց: Ավարտուն և մշակված նորմատիվային շրջանակը, որը մեկ տասնամյակ առաջ օգտագործում էր Եվրոպական համայնքը Հարավսլավիայի փլուզումից հետո, այս դեպքում, ըստ էության, պարզապես բացակայում էր: Մեկ այլ հետաքրքրական փաստ է, որ ուսումնասիրելով Կոստվոյի անկախության հռչակմանը միջազգային արձագանքները, ընդ որում, և՛ եվրոպական, և՛ ոչ եվրոպական երկրների, կարելի է նկատել, թե որքան սակավաթիվ են հղումները միջազգային իրավունքին: Ընդ որում, այդ հղումները հաճախ սահմանափակվում են ընդամենը «միջազգային իրավունքի», «իրավունքի գերակայության» մասին հիշատակումներով, կամ ազգերի ինքնորոշման իրավունքի կամ փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ անորոշ ձևակերպումներով: Կոստվոն ճանաչած պետություններն իրենց որոշումը գրեթե միաձայն բացատրում են (եթե որևէ բացատրություն տալիս են) բացառապես քաղաքական, մասնավորապես, տարածաշրջանում կայունության, խաղաղության և անվտանգության հաստատման նկատառումներով և այդ գործոնների վրա ճանաչման ունեցած դրական ազդեցությամբ: Մինչդեռ այն պետությունները, որոնք հրաժարվեցին ճանաչել Կոստվոն, իրենց հիմնավորումներում գլխավորապես վկայակոչում էին միջազգային իրավունքը, մասնավորապես, պետական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության գաղափարները՝ Վեստֆալյան հիմնարար սկզբունքները: Այնուամենայնիվ, այդ համատեքստում

³⁴ Council of the European Union Press Release: General Affairs and External Relations, 2851st Council meeting, 6496/08 (Presse 41) Brussels, 18 February 2008, http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/gena/98818.pdf, (08.09.2016).

հարկ է ևս մեկ անգամ արձանագրել, որ միջազգային իրավունքը չի արգելում սեքսիսիայի ճանաչումը, քանի որ սեքսիսիան, հանդիսանալով ներպետական մակարդակի հարց, չի խախտում միջազգային իրավունքի հիմնարար նորմերը (մասնավորապես, պետությունների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության): Ուստի, չճանաչելու հիմնական պատճառը ոչ թե միջազգային իրավունքի, այլ պետական քաղաքականության տիրույթում է՝ հատկապես, հաշվի առնելով այն փաստը, որ մեծ թվով պետություններ իրենք էլ ունեն փոքրամասնությունների և անջատողական միտումների հետ կապված խնդիրներ: Նրանք անհապաղ մասնանշեցին Կոստվոյի ճանաչման նախադեպատեղծ վտանգները միջազգային և տեղական կայունության համար³⁵:

Կոստվոն ճանաչած մի շարք պետություններ, գիտակցելով այդ վտանգը, ճանաչման իրենց հայտարարություններում ընդգծեցին Կոստվոյի դեպքի «եզակիությունը»՝ միտում ունենալով հերքել այն պնդումը, որ վտանգավոր նախադեպ է ստեղծում: Ակնառու է, որ Կոստվոյի ճանաչման *sui generis* (եզակի) բնույթի այդպիսի շեշտադրումը նպատակ ունի նվազեցնել այդ դեպքի կարևորությունը՝ որպես միջազգային իրավունքի կիրառում: Այդ առումով հետաքրքիր է, հատկապես, 2008թ. փետրվարի 18-ին արված ԵՄ Խորհրդի հայտարարությունը, որում ընդգծվել է ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների հիմնարար նշանակությունը՝ միաժամանակ պնդելով, որ այդ սկզբունքները ամբողջությամբ չեն կիրառվի Կոստվոյի *sui generis* դեպքի համար. Խորհուրդը վերահաստատում է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ և Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված սկզբունքներին, այդ թվում՝ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքներին, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին հավատարիմ մնալու պատրաստակամությունը: Այն նաև շեշտում է, որ հաշվի առնելով 1990-ականներին ծագած հակամարտությունը և Անվտանգության խորհրդի 1244 բանաձևի ներքո գործող ժամանակավոր արտաքին կառավարման երկար ժամանակահատվածը, Կոստվոն հանդիսանում է *sui generis* դեպք, որը չի հակասում վերոնշյալ

³⁵ Ryngaert C., Sobrie S., Op. cit.

սկզբունքներին և բանաձևերին³⁶: Ակնհայտ է, որ թեև հղումներ են արվում իրավական նորմերի, սակայն հայտարարությունը քաղաքական է, քանի որ բացառիկության որևէ իրավական հիմնավորում չկա: Ավելին, Արդարադատության միջազգային դատարանի կարծիքը Կոսովոյի վերաբերյալ որևէ ձևակերպում չի պարունակում դեպքի եզակիության վերաբերյալ:

Կոսովոյի դեպքը պարզ դարձրեց, որ պետությունների համայնքը խիստ տարամիտվել է միջազգային ճանաչման հարցում, ինչպես նաև այն, որ ճանաչման քաղաքական գործընթացում անգամ այնպիսի հեղինակավոր կազմակերպության պարագայում, ինչպիսին ԵՄ-ն է, միջազգային իրավունքը չի ունեցել առաջնային նշանակություն: Թեև չի կարելի նաև թերագնահատել խնդրի իրավական կողմը: Պատահական չէ, որ անգամ այն բանից հետո, երբ ավելի քան հարյուր երկիր երկկողմ հարաբերությունների ձևաչափով ճանաչել էր Կոսովոյի անկախությունը, ՄԱԿ-ի անդամ երկրների մեծ մասը կարևորեց իրավական կողմը՝ քվեարկելով Արդարադատության միջազգային դատարանի մասնագիտական կարծիքի հայցման օգտին:

Նման իրավիճակ կրկին երևան եկավ ընդամենը մի քանի ամիս անց Վրաստանում ծավալված իրադարձությունների համատեքստում: Ազգերի ինքնորոշման իրավունքը կրկին կիրառվում էր ոչ գաղութատիրական համատեքստում և դիտարկվում էր որպես Հարավային Օսիայի և Աբխազիայի «անջատում հանուն փրկության» վերականգնողական հատուցողական անջատման՝ որպես իրավական պաշտպանության միջոցի (remedial secession³⁷) պահանջների հիմք: «Անջատում հանուն փրկության» իրավունքը, այն է՝ անջատումը, որի օրինականությունը բխում է իշխող ռեժիմի ապօրինի բնույթից, ամրագրված է

³⁶ Council of the European Union Press Release: General Affairs and External Relations, 2851st Council meeting, 6496/08 (Presse 41) Brussels, 18 February 2008, http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/gena/98818.pdf (08.09.2016).

³⁷ **Simon Th.**, Remedial Secession: What the Law Should Have Done, from Katanga to Kosovo, *Georgia Journal of International & Comparative Law*, **40**, 105, 2011, pp. 107-172; **Cismas I.**, Secession in Theory and Practice: the Case of Kosovo and Beyond, *Goettingen Journal of International Law* 2 (2), 2010, pp. 531-587; **Vidmar J.**, Remedial Secession in International Law: Theory and (Lack of) Practice, *St. Antony's International Review*, **6**, no. 1, 2010, 37-56.

«ՄԱԿ կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների» հռչակագրում³⁸: Միաժամանակ, այդ փաստաթուղթը նաև ընդգծում է ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքները, ինչի վրա պատրաստակամորեն հիմնվում են Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը չճանաչող պետությունները Ռուսաստանի ճանաչումը դատապարտելու գործում: Այդ դիրքորոշումը կիսում էր նաև ՆԱՏՕ-ն. դիրքորոշում, որը Ռուսաստանը որակեց որպես «երկակի ստանդարտների վրա հիմնված միջազգային իրավունքի քաղաքական դրդապատճառներով պայմանավորված կամայական մեկնաբանություն»՝ ակնարկելով ՆԱՏՕ-ի ներգրավվածությունը Կոսովոյում³⁹: Մինչդեռ երկակի ստանդարտներ կիրառելու քննադատությունը հավասարապես կիրառելի է նաև Ռուսաստանի դեպքում, որը հրաժարվեց ճանաչել Կոսովոն՝ որակելով որպես միջազգային իրավունքի սկզբունքների խախտում, մինչդեռ ընդամենը մի քանի ամիս անց ճանաչեց Հարավային Օսիան և Աբխազիան: Ի վերջո, այն հարցը, թե արդյոք դիտարկվող այս կամ այն դեպքի հանգամանքները կարել է համարել remedial secession, և, մանավորապես, լեզիտիմ է ռեժիմը և բավարար կերպով պաշտպանում է փոքրամասնությունների իրավունքները, թե ոչ, «սկանատեսներն» էլ կարող են որոշել: Ըստ այդմ, remedial secession-ի դեպքում կիրառվող իրավական ստանդարտների անորոշությունը գլխավոր դերակատարներին հնարավորություն է ընձեռում վկայակոչել բարոյական բարձր ստանդարտները և, կախված դեպքից, հաստատել կամ մերժել սեցեսիայի և դրան հաջորդած (չ)ճանաչման օրինականությունը⁴⁰:

Ինչպես Կոսովոյի ճգնաժամի դեպքում, Հարավային Օսիայի և Աբխազիայի ճանաչման քաղաքական դիսկուրսը նույնպես միտում

³⁸ 2625 (XXV). Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, <http://www.un-documents.net/a25r2625.htm>, (08.09.2016).

³⁹ **Weitz R.**, Global Security Watch – Russia: A Reference Handbook, Praeger Security International, Santa Barbara, Calif, 2010, pp. 150-157.

⁴⁰ **Ryngaert C., Sobrie S.**, Op. cit.

արձանագրեց սահմանափակվել ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների միջև կեղծ հակադրությունների փնտրտուքների և դրանց ակտիվ քննարկման խնդիրներով: Վերոնշյալը կրկին առաջ է բերում պետության ճանաչման իրավական նորմերի դերի, բովանդակության և ընդգրկման շահարկումներով պայմանավորված հիմնարար խնդիրները: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Միջազգային անկախ փաստահավաք կոմիտեի ներկայացրած ամփոփիչ զեկույցը⁴¹ պարունակում է բավական մշակված փաստարկներ, որոնց շրջանակներում միավորների ճանաչման կամ չճանաչման գնահատման համար օգտագործվել են ինչպես ավանդական, այնպես էլ հետհարավսլավական չափանիշներ: Ցավոք, այդ մանրագնին իրավական դիսկուրսը չի արժանացել պետությունների համայնքի ուշադրությանը և չի ունեցել կարևոր դերակատարություն՝ ի տարբերություն Հարավսլավիայի փլուզման ընթացքում պետական և կառուցվածքային դիսկուրսի վրա Բադինտերի հանձնաժողովի ունեցած զգալի ազդեցության: Թերևս, դա պայմանավորված էր այն փաստով, որ Փաստահավաք կոմիտեի զեկույցը հրապարակվեց Վրաստանում ծավալված իրադարձություններից գրեթե մեկ տարի անց⁴²:

Հարավսլավիայում, Կոսովոյում և Վրաստանում զարգացումները նշանավորեցին այն ժամանակաշրջանի ավարտը, երբ ճանաչման հարցում պետությունների վարքագիծը հարաբերականորեն հետևողական էր և միասնական: Որպես վերոնշյալի անմիջական հետևանք, օրեցօր աճում է անորոշությունն այն հարցի շուրջ, թե որ նորմերն են ներկայումս կարգավորում պետությունների ճանաչման գործընթացը: Եթե ցանկություն կա պահպանել միջազգային իրավունքի հեղինակությունը և դերը՝ որպես միջազգային հարաբերությունները կարգավորող

⁴¹ Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia, Report, Vol. I, http://www.mpil.de/files/pdf4/IIFFMCG_Volume_I2.pdf, (08.09.2016); Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia, Report, Vol. II, http://www.mpil.de/files/pdf4/IIFFMCG_Volume_II1.pdf, (08.09.2016); Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia, Report, Vol. III, http://www.mpil.de/files/pdf4/IIFFMCG_Volume_III1.pdf, (08.09.2016).

⁴² **Ryngaert C., Sobrie S., Op. cit.**

մեխանիզմ, այն պետք է ադապտացվի ժամանակակից զարգացումներին՝ միաժամանակ չհրաժարվելով նորմատիվային նկրտումներից⁴³:

Պետության միջազգային ճանաչման մեկ այլ՝ ավելի հաջողված դեպք է Հարավային Սուդանը, որն անջատվեց Սուդանից 2011թ.: Հարավային Սուդանը քիչ թե շատ ինքնավար մարզ էր Սուդանի կազմում, սակայն երկու արյունալի քաղաքացիական պատերազմներն ազդարարեցին Խարթումի կենտրոնական կառավարության և Հարավային Սուդանի ժողովրդի միջև հարաբերությունների վատթարացումը: Անջատման համար հանրաքվեն անցկացվեց 2011թ., որի արդյունքում ընտրողների 98,83 տոկոսը կողմ քվեարկեց անկախությանը⁴⁴, և 2011թ. հուլիսի 9-ին Հարավային Սուդանը հռչակվեց անկախ պետություն: Ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 14-ին, Հարավային Սուդանն անդամակցեց ՄԱԿ-ին⁴⁵, և ներկայումս այն արդեն ճանաչել է 130 ՄԱԿ անդամ: Այդ պետություններից առաջինը Սուդանն էր, ինչը մատնանշեց այն փաստը, որ Հարավային Սուդանի անջատումը տեղի է ունեցել Սուդանի համաձայնությամբ: Մինչդեռ ոչ Կոսովոն, ոչ Աբխազիան և Հարավային Օսիան չեն ճանաչվել համապատասխանաբար Սերբիայի⁴⁶ և Վրաստանի⁴⁷ կողմից: Սուդանի կողմից

⁴³ **Crawford J.**, *The Creation of States ...*, Op. cit., p. 98.

⁴⁴ Results of the Referendum of Southern Sudan, <http://southernsudan2011.com/>, (09.09.2016).

⁴⁵ UN welcomes South Sudan as 193rd state, <http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=39034#.WADJ--V97IU>, ((08.09.2016).

⁴⁶ “Resolution of the National Assembly of the Republic of Serbia on Basic Principles for Political Talks with Interim Institutions of Self-Government in Kosovo-Metohija” defines six basic principles for political talks with Priština, the first of which is “The Republic of Serbia, in accordance with international law, the Constitution and the will of the citizens, does not recognize and will never recognize Kosovo’s unilateral declaration of independence” see Resolution of the National Assembly of the Republic of Serbia on Basic Principles for Political Talks with Interim Institutions of Self-Government in Kosovo-Metohija, https://www.ceas-serbia.org/images/Resolution_on_the_basic_principles_for_political_talks_with_the_Provisional_Institutions_of_Self-Government_in_Kosovo.pdf, (09.09.2016); **Armakolas A., Maksimovic M.**, Serbia’s Resolution on Kosovo and Metohija & the Belgrade-Priština dialogue: Is there a solution after the Resolution?, ELIAMEP Briefing Notes, Hellenic Foundation for European and Foreign Policy (ELIAMEP), Issue 9, 2013.

ճանաչմանն անմիջապես հաջորդեց տարածաշրջանային տերություն Եգիպտոսի և այդ ժամանակահատվածում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նախագահող Գերմանիայի կողմից ճանաչումը: Չինաստանը, ԱՄՆ և Ռուսաստանը հետևեցին վերջիններիս օրինակին՝ ըստ այդմ, մասնացույց անելով, որ առավել ազդեցիկ տերությունները համար Հարավային Սուդանում շահերի բախում չունեն և պետականությունն ընդունելի էր⁴⁸:

Այնուամենայնիվ, Հարավային Սուդանի դեպքը զարկ տվեց քանավեճերի նոր փուլի մեկնարկին, հատկապես Հարավային Սուդանի շուտափույթ ՄԱԿ անդամակցության և Պաղեստինի պետականության ճանաչման համար ներկայացված հայտի շուրջ բուն հակասությունների և խնդիրների համեմատության համատեքստում՝ առաջ քաշելով բավականին հետաքրքրական հարցեր: Այսպես, կշեռքի մեկ նժարին առկա է ենթակառուց-վածքային և տնտեսական զարգացման ծայրահեղ ցածր մակարդակով, անկայուն կառավարությամբ, ծառայությունների ոչ պատշաճ մատուցմամբ, 44,35% գրագիտության մակարդակով⁴⁹ և մանկական թերսնման և մահացության չափազանց բարձր մակարդակով⁵⁰ Հարավային Սուդանը: Բնակչության ավելի քան կեսն ապրում է աղքատության շեմից ցածր պայմաններում, իսկ տարբեր ցեղախմբերի միջև կատաղի վեճերն էլ ավելի են սրում առկա իրավիճակը: Արդյունքում, Հարավային Սուդանը դեռևս անգոր է երաշխավորել կայունություն և խաղաղություն. հատկապես անջատումից հետո սրվել են թշնամական հարաբերությունները Հարավային Սուդանի բազմաթիվ էթնիկ խմբերի միջև, ինչը հանգեցրել է տարածաշրջանում աճող ապակայունաց-

⁴⁷ Abkhazia, S. Ossetia Formally Declared Occupied Territory, Civil Georgia, <http://www.civil.ge/eng/article.php?id=19330>, (09.09.2016); South Ossetia is not Kosovo, The Economist, <http://www.economist.com/node/12009678>, (09.09.2016).

⁴⁸ Klabbers J., Op. cit., p. 75.

⁴⁹ UNESCO data center: Literacy rate, South Sudan 2015, <http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=166>, (09.09.2016).

⁵⁰ Levels & Trends in Child Mortality, Report 2015: Estimates Developed by the UN Inter-agency Group for Child Mortality Estimation, United Nations Children's Fund p. 24, http://www.childmortality.org/files_v20/download/IGME%20report%202015%20child%20mortality%20final.pdf, (09.09.2016).

մանը⁵¹: Ակնհայտ է, որ պետությունն ունի ժողովրդավարական կառավարման փորձի պակաս, իսկ քաղաքական մրցակցության ինստիտուտը դեռևս շատ թույլ է և թերի ձևավորված⁵²: Միաժամանակ, կշեռքի մյուս նժարին առկա են մի շարք մասնակի ճանաչված պետություններ, ինչպիսիք են Պաղեստինյան պետությունը⁵³ և Կոսովոյի Հանրապետությունը, կամ, ինչն ավելի պարադոքսալ է, մի շարք չճանաչված պետություններ, որոնց թվում հատկապես Արցախի Հանրապետությունը, որոնք անհամեմատելի ավելի լավ վիճակում են, քան Հարավային Սուդանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ միանգամայն բնական է այն հարցադրումը, թե ինչու Հարավային Սուդանը կարող է ճանաչվել որպես պետություն, մինչդեռ Պաղեստինը, Կոսովոն կամ Արցախը՝ ոչ: Միգուցե այն պատճառով, որ Հարավային Սուդանն անջատվել է Սուդանից վերջինիս համաձայնությունով (գրեթե չորս տասնամյակ տևած քաղաքացիական պատերազմից հետո), մինչդեռ Պաղեստինը, Կոսովոն և Արցախը չեն հասել նման համաձայնության համապատասխանաբար Իսրայելի, Սերբիայի և Ադրբեջանի հետ: Առավել ևս, որ ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա հարաբերականորեն վերջերս անկախություն հռչակած մի շարք պետությունների դեպքում, մասնավորապես, Էրիթրեայի Պետությունը (միջազգայնորեն ճանաչվել է 1993թ.⁵⁴) և Թիմոր Լեստեի Ժողովրդավարական Հանրապետությունը (միջազգայնորեն ճանաչվել է

⁵¹ **Manby B.**, The Right to a Nationality and the Secession of South Sudan: A Commentary on the Impact of the New Laws, Open Society Initiative for Eastern Africa, 2012.

⁵² Freedom in the World 2016: South Sudan, <https://freedomhouse.org/report/freedom-world/2016/south-sudan>, (09.09.2016); Fragile States Index 2016: South Sudan, <http://fsi.fundforpeace.org/2016-southsudan>, (09.09.2016).

⁵³ Strangled: Gaza collapsing in the grip of a humanitarian crisis, Euro-Med Monitor for Human Rights, May 2015, http://euromedmonitor.org/uploads/reports/Strangled_En.pdf, (11.09.2016);

⁵⁴ Admission of Eritrea to membership in the United Nations, <http://dag.un.org/handle/11176/193150>, (11.09.2016), UN Security Council Resolution 828 (1993), [http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/828\(1993\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/828(1993)), (11.09.2016).

2002թ.⁵⁵), նույնպես ստացել են իրենց «մայր պետությունների» Եթովպիայի և Ինդոնեզիայի, ճանաչումը, սակայն, ինչպես Հարավային Մուդանուր, այստեղ ևս կառավարման արդյունավետությունը և կայունության մակարդակը, մեղմ ասած, լավ վիճակում չեն: Սակայն «մայր պետության» դերակատարությունն այս դեպքում թվացյալ է, քանի որ թվարկված պետություններն իրենց «համաձայնությունը» տվել են միջազգային հանրության կոշտ ճնշումների ներքո: Օրինակ, Ինդոնեզիան այդ քայլին գնաց միայն այն բանից հետո, երբ ՄԱԿ-ը սպառնաց հակառակ դեպքում այդ պետությունը ճանաչել որպես Արևելյան Թիմորում ցեղասպանություն իրագործած երկիր: Միաժամանակ, ամենակարևորն այն է, որ միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերն ինքնորոշման իրավունքի օրինական կիրառման հիմք են համարում միայն ինքնորոշվող ժողովրդի կամքի ազատ արտահայտումը⁵⁶: Հետևաբար որևէ մեկը, այդ թվում և «մայր պետությունն» իրավունք չունի բարձրագույն իրավական նորմի կարգավիճակ ունեցող այդ իրավունքի կիրառումը՝ անկախ պետության հոչակումը, հետևաբար և դրա ճանաչումը որևէ հիմնավորմամբ կասկածի տակ դնել:

Եզրակացություն

Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ ձևավորվող պետությունների ճանաչման գործընթացների ուսումնասիրությունը վկայում է, որ պետության բնականոն զարգացումը պետք է ընթանա հետևյալ երեք փուլերով՝ անկախության հոչակում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին) և պետության կայացում, որոնցից ամենատևականն ու ամենաբարդը երկրորդն է՝ ճանաչումը, քանի որ սահմանափակ միջազգային շփումներ ունեցող

⁵⁵ UN General Assembly Resolution 57/3 (2002): Admission of the Democratic Republic of Timor-Leste to membership in the United Nations, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/UNMembers%20ARES573.pdf>, (11.09.2016); Unanimous

⁵⁶ Assembly Decision Makes Timor-Leste 191st United Nations Member State, <http://www.un.org/press/en/2002/ga10069.doc.htm>, (11.09.2016).

երիտասարդ պետությունը պետք է կարողանա աջակցություն ստանալ այլ պետություններից:

Այդ գործընթացների հիմնական բարդությունները պայմանավորված են այն բախումներով, որոնք առաջանում են իրավական և քաղաքական բաղադրիչների միջև՝ սկսած երկրորդ փուլից: Մինչդեռ, քանի որ միջազգային իրավունքը լիարժեքորեն և հստակ սահմանում է ինքնորոշման իրավունքի ընդգրկումը (վերաբերում է բոլոր ժողովուրդներին), կարգավիճակը (միջազգային իրավունքի անվերապահ և համապարտադիր նորմ), բովանդակությունը (քաղաքական կարգավիճակի որոշում) և կիրառման ձևերը (ինքնորոշվող ժողովրդի կամքի ազատ արտահայտմամբ ցանկացած՝ այդ թվում և անկախ պետության ստեղծում կամ միացում այլ անկախ պետության, քաղաքական կարգավիճակի ընտրություն), ապա յուրաքանչյուր դեպքում, երբ անկախության հռչակման գործընթացը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին, ճանաչումը չպետք է երկարատև ընթացք ունենա: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն անդամ երկրների հիմնական պարտավորություններից մեկն է ինքնորոշման իրավունքի հարգումն ու բարեկամական հարաբերությունների ստեղծումը: Անգամ կամայական (քաղաքական) քվեարկությունը նոր պետության անդամակցության ժամանակ անդամ երկրներին չի ազատում կանոնադրությանը միանալու ժամանակ ստանձնած պարտավորությունների կատարումից:

Այդուհանդերձ, որոշ երկրներ, իսկ երբեմն նաև որոշ հետագոտողներ փորձում են դրանից խուսափել ազգերի ինքնորոշման իրավունքի «միտումնավոր» մեկնաբանումով՝ բացահայտորեն օգտագործելով «անվտանգությանը սպառնացող գործոնների արթնացման» քարոզչությանը բնորոշ կանոններ. «վտանգի տակ կորվի փխրուն խաղաղությունը», «մարդկությունը կզրկվի բնականոն ու կայուն զարգացումից» և այլն: Մինչդեռ հենց խնդրի լուծման ձգձգումն է տասնամյակների ընթացքում պահպանում լարվածությունը և պատերազմի վերսկսման վտանգը տարածաշրջանում, էապես սահմանափակում օրինականորեն ինքնորոշված ժողովուրդների զարգացման հնարավորությունները և նորաստեղծ պետությունների կայացման հնարավորությունները: Միջազգային հարաբերությունների խիստ

սահմանափակ պայմաններում նրանք սկսում են պետության կառուցման և կայացման գործընթացները այնպիսի մարտահրավերների առկայությամբ, ինչպիսիք են զինված հակամարտությունից հետո պետության վերակառուցումը և վերականգնումը, գլոբալիզացիայի խորացումը, իսկ հետխորհրդային պետությունների դեպքում դրանք համալրվում են նաև հետխորհրդային տրանսֆորմացիայի մարտահրավերներով: Մինչդեռ այդ պետություններն ունեն օգնության և աջակցության, այլ ոչ թե քաղաքական մանիպուլյացիաների կարիք:

Մոնտեվիդեոյի կոնվենցիայի հիշատակումը՝ որպես պետության իրավասուբյեկտության ճանաչման լրացուցիչ պայման՝ ի լրումն ինքնորոշման իրավունքի նորմերի, ի դերն է ելնում կոնվենցիայի դրույթների առաջարկվող մեկնաբանությամբ: Կոնվենցիայի Հոդված 1-ի չորս չափանիշների կապը պետության անկախության ճանաչման հետ հետևյալն է՝ պետությունը ճանաչվում է, եթե այն հռչակվել է կոնկրետ տարածքում (բ չափանիշ) ապրող բնակչության կամքի ազատ արտահայտմամբ (ա չափանիշ), այդ տարածքն ամբողջությամբ վերահրսկվում է կառավարության կողմից (գ չափանիշ), որը կարողանում է հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ (դ չափանիշ): Վերջինն անհրաժեշտ է, քանի որ ճանաչման վերջին ակորդը՝ ՄԱԿ-ին անդամակցության հարցի քննարկման ժամանակ ճանաչվող պետության օգտին քվեարկությունը, հնարավոր է միայն այդ պետությունների պատրաստակամության դեպքում: Սակայն պետք է հաշվի առնել, որ այդ պատրաստակամությունը սահմանափակված է ՄԱԿ-ի կանոնադրությանը միանալով ստանձնած պարտավորություններով: Առաջարկվող մեկնաբանությունը ցույց է տալիս, որ որևէ հակասություն չկա միջազգային իրավունքի այդ հիմնարար փաստաթղթերի միջև: Ավելին, Մոնտեվիդեոյի կոնվենցիան նախանշում է այն ուղին, որը պետության հռչակումից տանում է դեպի ճանաչում:

**The Dilemma of International Recognition of States Emerged on
the Right of Peoples to Self-Determination:
The World After Yugoslavia**

VIOLETTA PETROSYAN

Yerevan Brusov State University of Languages and Social Sciences

The article discusses the process of international recognition of states emerged on the rights of peoples to self-determination, particularly, the issues of collision between political state practice and normative international law. This process is proposed to be viewed within three interconnected phases – the declaration of independence, international recognition and stateness process. The article represents a rendition of criteria enshrined in the Montevideo Convention on Rights and Duties of States, which takes into account the existence of legal and political factors of international recognition, as well as explains the reasons for longevity of the period between the declaration of independence and international recognition. The processes of recognition of the states emerged on the basis of self-determination are reviewed, analyzing a number of disputable cases starting from the opinion submitted by the Badinter Commission after the collapse of Yugoslavia.